

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ՄԱՄԻԿՈՆԵԱՆՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա. Մամիկոնեանց նշանակութիւնը եւ պատմութեան
աղբիւրները.

Յ ա լ ե յ ու ա ծ

Նահատակութիւնը կրօնի, հայրենիքի և առհասարակ
գաղափարի համար հնազոյն դարերում, այժմ և ապա-
գայում եղել է և կըլինի միշտ սխրալի: Յաղթողը այնքան
չէ շարժում մարդկանց սրտերը, մանաւանդ հասարակ
ժողովրդի որչափ նահատակը: Վարդանն ու Վարդանանք
մնացին տօնելի եկեղեցու և խնկելի աղզի համար, և ապ-
րում են ժողովրդի և աւանդութեանց մէջ, բայց Մեծ Վա-
հանը իւր ուխտապահներով միայն պատմագրութեան բա-
ժին մնաց և հազիւ ուրեմն աղօտ նշոյլով երևում է
Քայլ Վահանի վիպական գործերում: Այսպէս է ժողովրդի
հոգեբանութիւնը, և ահա թէ ինչու մի պատանի նահատակ՝
Միքայէլ դառնում է մեր ժողովրդական վէպի դիւցազն:

Այս միևնոյն պատճառով վէպի դիւցազններից մինը
դարձել է «Խու թեցի Յովնանը».¹ որ Բուդայի նահատա-
կած վկաններից մինն էր: «Գերիների հետ էր Յովնանը,
Խու թայ լեռից. այս նա է, որ երբ Բուդան Հայաստան էր
մտնում, նորան դէմ կացաւ այն լեռան բնակիչներով և
մեծամեծ հարուածներ հասցրեց արքունի զօրքին. իսկ երբ
լեռնացիներին դէմ կեցան Տաճիկների (արաբների) զուն-

1 Քամալեան Ա. սորան կոչում է «Սասունցի Յովնան», որ
նիւթ է դարձել նոյն վերնագրով պատմական վէպիկին. Թիֆլիս
1906:—Այս Յովնանը Յերենցի «Երկունք իններորդ դարու»
պատմական վիպասանութեան զլիաւոր գիւցազներից մինն է:

դերը և կոտորեցին լեռնականներին, ձերբակալ արին երանելի Յովնանին, տարան և շղթայակապ դրին արքունի բանդը»:

«Մի օր թագաւորը հրաման տուաւ նորան իւր առջև բերելու, և հարցնելով նորանից Յովսէփի (Յուսուֆի) մահուան մասին, որ տեղի ունեցաւ նորա երկրորդ վրէժխնդրական սլատերազմին, երբ զօրավարին դիմադրեց, յիշեցնելով նորան ապստամբութիւնը և արքունի վնասների մէջ խառնուելը. միևնոյն ժամանակ սաստիկ ահ էր տալիս նորան, որ գոնեա այնպիսով կարողանայ թերևս շեղել ճշմարիտ հաւատից»:¹ Ապա սկսում է Յովնանի նահատակութեան հանդէսը. այն աներկիւղ և անվեհեր պատասխանները, որ նա տալիս է, իրօք վայել է մի Խութեցու—Սասունցու, որ եթէ Մամիկոնեան էլ չէ, արժանի էր Մամիկոնեան դիւցազների շարքը դասուելու, որովհետև կարծես եղիշէի պատմութիւնն է յիշեցնում շատ անգամ բառացի և նոյն դարձուածներով: Երբ բռնաւորը նորա առաջ զրաւ այն վնասները, որով կարծում էր թէ նորան կորստեան ծուղակը կը ձգի, խօստանում է նորան աշխարհի վայելքները, պարգևներ և պատիւներ, միայն թէ նա ուրանայ իւր հաւատը և Մահմէդի կրօնն ընդունէ, ապա թէ ոչ սպառնում էր տանջանք և մահ. «Իսկ սուրբը զեղեցիկ խորհրդով ասաց բռնաւորին: «Ինչո՞ւ դու ինձ իբրև մանուկ տղայ ես համարում, դնում ես առաջս պատրանքներ, սնոտի, առասպելաբան, խաբեբայ և պատիր յոյս խոստանալով ինձ՝ որ զրկես ինձ ճշմարիտ յոյսից, որի ճշմարտութեանը ես մանկութիւնից վերահասու եմ»:² Երբ բռնաւորը սպառնում է նորան իւր թագաւորական խօսքերն արհամարհելու համար. ասում է երանելին. «Տեսնում եմ քեզ որպէս խելագար գառանցեալներից մինը, ինչպէս այժմ խօսում ես. ես վաղ անարգեցի քեզ, և ոչ ամենափոքր երկիւղ ունեցայ սրտումս քո պատճառով, որ քեզ քամահելով՝ քո զօրավարին իւր զօրքով միասին սրի մատնեցի»:

1 Թ. Արծր. Դ. Ժա. էջ 188:

և նորա աւարը բաժանեցի, և երկրորդ անգամին էլ փոքր կոտորած չհասցրի քո զօրքին: Արդ իմ արութեան հետ վատութիւն խառնեմ և մահուան երկիւղի տակ ընկնեմ: Մարմնաւորների համար այնչափ կռուեցայ, ինչպէս իմացար և ինչպէս այժմ լսում ես ինձանից, Քրիստոսի և յաւիտենական կեանքի համար չպիտի՞ մեռնիմ, կամ արդեօք քեզանից վախենամ. քսւ լիցի. ահաւասիկ կանգնած եմ, մի դանդաղիր կատարել, ինչ որ անել ես ուղում»: ¹ Այնուհետև երանելին նահատակուում է: — Մենք չենք զարմանայ, եթէ վաղը միւս օրը մի ուրիշ փոփոխակ երեւայ, որտեղ հանդէս գան և Մուկաթլ վանանդեցին, Սողովմոն Սևորդին, Կախայ վերին աշխարհեցին, որոնք ըստ Թովմայի նոյն բռնաւորի ձեռքով նահատակուել են. այլև Գնունի եղբայրները Դաւիթ և Գուրգէն: ²

Ժողովրդական վէպին ծանօթն այժմ հասկացաւ երեւի, որ այս Խութեցի Յովնանը վէպի Ձէնով Յովնանն է, որի ծագումը փոփոխակներում զանազան է: ³ Այսքան տարբերութիւնը ցոյց է տալիս, որ նորա ազգաբանութիւնը շփոթ էր. հաւանօրէն Մամիկոնեան է եղել. եթէ ոչ մի նշանաւոր նախարար, որ իւր քաջութեամբ կապուել է նոցա հետ, ինչպէս Միքայէլ պատանին ևս Բաղրատունեաց

¹ Թ. Արծր. Գ. Ժա. էջ 189—190:

² Յովհ. Կաթուղ. էջ 137—138:

³ Ձէնով—Յովան Դաւթի խրօխըր Մ. Աբեղ. 11: Ս. Հայկ. Հատոր Գ. 373—377: Ար. Աբեղ. 8—9, 48: Ս. Հայկ. Հատոր Բ. 24, 29, 42:—

Ձէնով—Ուլանը—Օհանը Աբամեղիքի որդին է, Դաւթի եղբայրը. Սրուանձտ—Պատի, 7: Ե. Լալայ. Հանգ. Ազդ. 49:—

Ձէնով—Յովան Դաւթի խրօխըր, բայց Սանասարի որդի Դար, Սար. 46, 89, 97:—Դաւթի պապ Սանասարի եղբոր Բաղդասարի որդի. Ս. Հայկ. Հատոր Գ. 411:

Ձէնով—Օւլան Քեռի Թորոսի որդի, խօր—Մանուկի եղբայր. Դար. Սար. 25: Սորա Ա. վարեանտով Ձինով—Յովանը Մհերի երրորդ որդին է, իսկ Բ. վարեանտով Դաւթի քեռին և Խլաթայ տէր. Դար. Սար. 23:

Մհերի խրօխըր Բ. Խալաթ. 58:—

միջոցով: Սակայն իրօք կարելի է ասել, որ երկու հանգամանքն էլ կայ: Ընդունելով հանդերձ, որ Խուլթեցի Յովնանը հաւանօրէն կարող էր լինել Մամիկոնեան, պէտք է կարծել, որ համանուն հայ նշանաւոր պատմական, ոչ Մամիկոնեան, մի այլ անձ ևս խառնուել է և միացել սորան:

Հանգամանքները և անուանց նոյնութիւնն ի նկատի առնելով կարելի է պնդել, որ վէպի Ձէնով Յովնանի պատմութեանը միացած է «Յովնան Պատրիկ ի հայոց կողմանէ»¹, որ պաշարել է Դուինը և Խոսրով Նուշիրվանի որդի Որմզդի ժամանակ հասել է մինչև Ատրպատական,² ինչպէս վէպի մէջ էլ ժողովրդական ղիւցազներ: Յովհան Պատրիկը Հայաստանում «սահմանակալ»³ է եղել Յունաց կողմից, որով նա զուցէ ժամանակակից էր Վարդան Բ. Մամիկոնեանին. իսկ որ գլխաւորն է Ասորիքի ներսէս⁴ Սորատեւատի (հայ ըստ Չամչեանի II, Գ. խդ. էջ 227) և Մուշնդ Մամիկոնեանի⁵ հետ Մօրիկ կայսեր հրամանով գնում են Խոսրով Պարուէղին գահ բարձրացնելու և օգնելու Վահրամ Չորինի⁶ դէմ: Բացի այդ ըստ Թաբարիի պատմութեան Մուշեղի հետ այս արշաւանքին «գլուխ է կարգուել Սերգիոս»⁷ անունով մի մարդ: Արդ մեր վէպի և Խլաթայ փոփոխակի մէջ Ձէնով Սարգիսը Ձէնով Օվանի եղբայրն է. սա Ձէնով Սարգսին օգնութեան է «կանչում», երբ այս երկուսի քեռորդի Դաւիթը վտանգի մէջ էր⁸: Ձէնով Սարգիսը մեր «ատենահաս սուրբ Սարգիս» զօրավարը, կարող

1 Սերէոս. ի Հերակլը Բ. էջ 33:

2 Սերէոս » Բ. էջ 31:

3 Ոսրէոս Ի, էջ 70:

4 Սեր. Բ. էջ 33. Խա. էջ 71—73:

5 Սեր. Գ. էջ 36—45:

6 Սերէոսը սորան կոչում է Վահրամ Մեհրեւանդակ (Բ, էջ 29, 30—32. Գ. էջ 36—40), իսկ Յովհան Մամիկոնեանը նոյն հանգամանքում կոչում է ոմն «Նիխորձէս (կամ Նիխորձէզ) որ զՈրմիզդ Եսպան» (Պատմ. Տաբօնոյ ա. էջ 14):

7 Th. Nöldeke, Tabari, էջ 284. Leyden. 1879:

8 Սասունայ Դավիթ (Խլաթայ բարբառով). Արարատ 1898. Թ. ԺԱ, ԺԲ. էջ 520—525:

էր այսպիսով ազգային վէպում համարուել Ձէնով Օվանի այսինքն Յովհան Պատրիկի եղբայր, որով հասկանալի է զառնում զոնեա մասամբ Ձէնով Օհանի, ինչպէս և Դաւթի Ատրպատականի կողմերը կատարած զործերը:

Սորա մակդիրը ցոյց է տալիս արդէն նորա էութիւնը: Ձայնը իբրեւ մի բնատուր ձիրք յարգուած է եղ'լ շատ ժողովուրդներից այսպէս էլ մեղնում: Հինգերորդ դարում Սահակ և Մեսրոպ Վռամշապուհի հրամանով դպրոցներում կրթելու համար ընտրում էին «փափկաձայն և երկարող»¹ մանուկներ, ունինք եւ դարում Սահակ Ձայնող² չքահայ, Զանգակի և Պետրոս՝ Երկաթի ընկերը, Ստեփանոս Ասողիկ պատմագիր և Գրիգոր Կանչող³: Հայոց ՇԽԳ. [=1095] թուին, ասում է Ուռհայեցին, «մեռաւ մեծ երասժիշտն և սիւնն սրբոյ եկեղեցւոյ Տէր-Թէոդորոս» էջ 252: Գիւցազներգութեան Ձէնով-Յովանի ձայնը սակայն երկրէ երկիր է հասնում, նա ցեղական կապով կապուած է Արծրունեաց հետ. նա նեղութեան ժամանակ Դաւթին, Մհերին ազատում է. նորա ձայնով հաւաքւում են բոլորը: Նորա ահարկու առասպելական⁴ ձայնը յիշեցնում է մեզ Իրանի փահլեաններին, որոնց հետ առհասարակ կապւում են ցեղակցութեամբ մեր Սասմայ ծուրը,⁵ որոնք յիրաւի, ինչպէս ցարդ եղած մէկ-երկու ականակից ընթերցողը նկատեց, նմանում են միմեանց: Ի նկատի պիտի առնել սակայն, որ Իրանի զասական փահլեանների հետ խառնուել է

1 Խորենացի Գ. Ժդ, էջ 247:

2 Ղ. Փարպ. Բ. լղ. էջ 68:

3 Սա. Օրբէլեան. կե, էջ 292:

4. «Ձէնով Ովանը այնպէս ձայնով էր, որ եօթը դամշի կաշի քցում արեւ շորցնում և շիւթաթում իրեն, ու բոռում էր, որ չլինի թէ պատռու էր». Արուսեան. — Պատկան. Գ, 7. Ը, 24. Թ, 26: Հմմ. և միւս փոփոխակները:

5 Բ. Խալաթեանց. Իրանի Հերոսները հայ ժողովրդի մէջ. Պարիս 1901: Մ. Աբեղեան Ազգագր. Հանդէս 1906 թ—1. Ը. էջ 31:—Շահնամէի Բէզհան կամ Բէշանը դարձել է մեղնում Վը. Ժան, ինչպէս վերեւը տեսանք. քացի այդ մեր ժողովրդական վէպում այդ անունը մակդիր է Մխօ-Միքայէլի:

մեր պատմութեան Ատրպատականի աթաբէգները՝ փեհ-
լիւնեանք¹:

Վէպի մէջ կան և Գեռի Թորոս կամ Գեռի Թորոսիկ
և Մխիթար Թազաւոր: Մխիթարը հազիւ մի փոփոխա-
կում է երևում և ծագումն ու որ երկրի Թազաւոր լի-
նելն անյայտ է, սորա մօտ ապաստան են գտնում Ասլի-
մելիքն ու Սանասարը²: Իսկ Գեռի Թորոսը հասակ առած
փորձառու մարդու տիպ է. սորա բուն տեղն էլ յայտնի չէ,
միայն թէ շարունակ Սասունումն է, ժողովուրդը նորան է
ղիմում տխրութեան օրերին,³ զնում է Մըսըր և շա-
րիաթով Աբամելիքի որդւոց ալատում է բերում, ուրեմն
մի տեսակ խնամակալ բոլորի: Դաւիթը⁴ նորան է զիմում
իւր պապու զէնքերն ուղում. սակայն սա էլ զիմում է
Յօան-Վէդին⁵: Թորոսը պակաս քաջ չէ միւսներից «քաշեր
է մէկ բարտի ծառ»⁶: Սասունցիք Մհերի մահից յետոյ,
Գեռի-Թորոսիին⁶ բերում են զնում իրենց մեծ, որի որ-
դիքն են Խոր-Մանուկ և Զինով-Օհան: Մհերի հոգեթասը
չէ ուղում խմել մինչև զնում է Մսրամելիքից իւր որ-
բերն ազատում. նա է Դաւիթին գործի⁷ զնում, հորթարած,
նախորդ և այլն կարգում և խրատում ինչպէս իսկական
խնամակալ: Երբ քեռի Թորոսիի թոյլտուութեամբ Դաւիթը
զնում է Համդա փահլեանի հետ կռուելու, ինքը մնում է

1 Grundriss der Iranischen Philologie II. էջ 570. 1896—1904
Strassburg: Հմմ. Ստ. Լէն-Պուլ. § 66, էջ 144: Ստ. Օրբէլեան
կէ, էջ 287—288: Խնամութիւն Կրանում բաղմոզ և հայոց իշ-
խաններէ մէջ եղել են, այսպէս Սաճիկ Յուսուփն առնում է Շա-
պուհ Բագրատունու զուտորը, Ալիասլանը Կորիկէի զուտորը,
Սմբատ Կունդստապլը և Մլէհն առնում են Թաթար խաթուն-
ներ, ինչպէս և Տարսայիճ իշխանը:—

2 Գար. Սար. Ա. 16:

3 Սրուանձ-Պատ. Գ, 8:

4 Անդ. Գ. 13:

5 Անդ. Ե. 15

6 Գար. Սար. Գ. 25—26:

7 Անդ. 26—36:

աղօթք անելու¹։ Բոլոր իւր տղեկներ կանչում է, որ երթան Կապուտկողի թագաւորից Դաւթի տղայ Մհերին առնեն, նորա հրամանով Չինով-Յովանը բռնում² է։ Վերեւ տեսանք նա բերդին անունն է դնում։ Նա պսակում է մեր զիւցազներին, Դաւթիներին, Մհերներից յետոյ առաջին տեղն է բռնում Քեռի-Թորոսը։ Քեռի մակդիրը ցոյց է տալիս որ նա մեր զիւցազներից Դաւթի կամ Մհերի³ քեռին է։

Արդ ԺԱ. դարու վերջերում և ԺԲ. ի սկզբում Եդեսիայում իշխում էր Թորոս Կուրապաղատը⁴։ Մելիքշահի եղբայր Դգուշը առնում է Հալպը, յետոյ Ուռհան «և կացուցանէր զիշխանն Հոռոմոց զԹորոս որ ասէին Հեթմոյ որդի»։ Վէպի մէջ էլ Քեռի Թորոսը հարկատու է։ Դգուշի որդի Ռատուանը հօր մահից յետոյ ուրիշ փախստականների հետ փախչում գալիս են Ուռհա։ Թորոս Կուրապաղատը «այր ճարտասան և հնարաւոր յոյժ» նոցա ընդունում է և կամենում է ձերբակալել և տիրել Ուռհայի կղային, միւս իշխանները անպատեհ համարելով հեռանում են։ Թորոսը շատ հնարներով ջանաց տիրել քաղաքին և հաւատացեալներին այլազգիներից փրկել և սկսուեց քաղաքը պարսպել և կղայի հետ միացնել, որտեղ կային թուրք պահապաններ և մի գունդ հայոց զօրք, որ Դգուշն էր այնտեղ կարգել։ Այս լսելով գալիս են Սամուսատի, Հալպայ և Անտիոքի թուրք ամիրաները, բայց Թորոսը առիւծաբար քաջալերում է քաղաքացիներին և անթիւ զանձնը տալիս, քաղաքացիք առիւծի սիրտ են առնում և թշնամուն յետ մղում։ Այն ժամանակ սուլտանի զօրականներից մինը «Մխիթար պատրիկը», «այր քրիստոնեայ», խորհուրդ է անում և Մսնիակի կլան Թորոսի ձեռքն է տալիս։ Թորոսն ինչպէս երևում է նեղն ընկնելով Ուռհա

1 Գար, Սար. էջ 47։

2 Անդ. էջ 50—50։

3 Ե. Լալայեան Աղդ. Հանդէս էջ 40։

4 Մատթ. Ուռհ. էջ 246—252։

է բերում Ալփերակ սուլտանին: որպէս զի թշնամիներէց վրէժ հանէ, բայց երբ իմացաւ, որ սա ուզում է իրեն սպանել, թունաւորեց նորան: Հոռոմոց այս հայ իշխան թորոսը հայոց Շխէ՛ թուին հրաւիրում է Պաղտին կոմսին, Գոտֆրիդ Բուլոնացու եղբօրը, որ նուաճել էր թլպաշարը, որպէս զի սա կայ և իրեն օգնէ թշնամիների դէմ: Յետոյ քառասուն հոգի միաբանելով Պաղտինի հետ դաւաճանեցին թորոսին և այս կումը հակառակ Վարազայ և Մաքինեաց Ս. Նշանի վերայ արած երդման սպանել տուաւ թորոսին, «որի հանճարեղ իմաստութեան, արուեստաւոր հնարաւորութեան և բուռն զօրութեան շնորհիւ Ուռհայն ազատուեցաւ չար և դառնացեալ Տաճիկ ազգի հարկադրութիւնից և ծառայութիւնից»: Յետոյ երբ Ուռհայում սարսափելի սով ընկաւ, «Շատերն ասացին, թէ այս Աստուծու դատաստանն է թորոս Կուրապաղատի անիրաւ մահուան համար, որին խաչ աւետարանով երդուան»²:

Արդ ՆՁ Հայոց թուին մեռնում է Ուռհայի Շէպլ ամիրան և ծագած երկպառակութեան պատճառով հրաւիրւում է հոռոմոց Մանեակ կամ Մանիկ³ իշխանը, որ կոչւում էր Գէորգ, և Սամուսատի իշխանն էր և տէր է դառնում Ուռհային թուրքերի և Արապիկների կռիւների ժամանակ, ուրեմն թորոսից էլ առաջ, որի դէմ հաւաքւում են քառասուն հեռաւոր և շրջակայ և Հայաստանի քաղաքների ամիրաները և դիմում Ուռհայի վրայ, բայց քաղաքացիք յաղթում են և դադարում է քրիստոնեաների հալածանքը: Տուրքիլ սուլթանի ժամանակ առնւում է Տաճիկների ձեռքով Ուռհայն: Իսկ այս բոլոր նեղութիւններից յետոյ «քաջ Մանեակը» փոխւում է, Ռոմանոս տալիս է «զՈւրհա Ապուքապայ վրանպահուն Դաւթի Կուրապաղատին»:

Ահա թէ ինչու կարող էր Ուռհայի թորոսը Մամիկոնեանց Դաւթի վէպի հետ կապուել, և ինչու Խոր-Մա-

1 Մ. Ուռհ. էջ 260—262:

2 Մ. Ուռհ. էջ 270—271:

3 Մ. Ուռհ. էջ 58—64:

նուկը կարող էր Քեռի թորոսի որդին դառնալ Ձէնով-Օվանի հետ: Բացի այդ Ուռհայի կոմսերը Հայոց Թագաւորների հետ յարաբերութիւններ և ազգակցական կապեր են ունեցել. և Պաղտինի յաջորդներից մինը, հաւանօրէն ժողպէն Բ.՝ կոչւում է Լեոն Ա.՝ որդոց թորոսի, Ռուբենի, Ստեփանէի և Մլեհի քեռի² Հայոց ՇԶԱ. Թուին: Այսքան հայ Թագաւորների քեռի լինելը կարող էր Ուռհայի կոմսին քեռի մակդիրը դրոշմել, որ սակայն վէպի մէջ անցել է Ուռհայի նախորդ տէր թորոս կուրապաղատին, և այս կը կապուէր Մամիկոնեանց և մասամբ և այն պատճառաւ, որ Մամիկոնեանք Գ. դարուց ունին կոմս անունը, մանաւանդ թէ տիտղոս և պաշտօն հռոմոց մասում: Վէպի Քեռի-Թորոսը ի հարկէ զլիաւորապէս մեր այս կիւրապաղատն է: Անհաւանական չէ, որ Ռուբինեան թորոս Ա. և Բ.՝ ձուլուէին Քեռի թորոսի հետ: Երկու Ռուբինեանք ևս պատերազմներ են մղել Սելջուկեան թուրքերի դէմ, իսկ վերջինս և Հալէպի սուլթան Նուրէդդինի դէմ, որի նախորդ Ջանգին Ուռհայն կամ Եղեսիան խլել էր խաչակիրներից: Սակայն ժողովրդական վէպի և ոչ մի փոփոխակը դժբախտաբար մեզ յենակէտ չէ տալիս: Բայց անշուշտ սորա հետ խառնուել միացել է և յոյն թէոգոսիոսը³, Մօրիկ հայ կայսեր որդին: Մօրիկը իւր դուստրը Խոսրով Բ. Պարուէզին կնութեան տալով որդուն ևս ուրիշների հետ միասին նորան օգնութեան է ուղարկում, որոնց հետ էր և Մուշեղ սպարապետը: Կիւրապաղատ թորոսի հայ լինելը շատ հաւանական է, ինչպէս երևում է նորա հօր՝ Հեթում հայ անունից և ինչպէս կարելի է եզրակացնել Միքայէլ Ասորու խօսքերից⁴: Ըստ Միքայէլի հաւատուրաց

1 Ալիշան. Սիսուան էջ 45. Վենետիկ 1885:

2 Սամուէլ Անեցի, էջ 130. ՇԶԱ. Թուականի տակ. Վաղարշապատ 1895:

3 Tabari. էջ 283—285: Սեբէոս Գ, իա, էջ 72. Գ, իգ, էջ 77. Գ, իգ, էջ 79:

4 Ժամանակագրութիւն. Գ. էջ 403, 399. Երուսաղէմ 1871: Հմմ. Մ. Ուռհայեցին:

հայ Փիլարտոսն էր նշանակել Թէոդորոսին Ուռհայի տէր: Ոչ նուազ հաւանական է Մխիթարինը, որ զուտ հայկական անուն է, իսկ Մանեակ կամ Մանիկ ըստ ձևի աւելի հայկական է, որոնք վէպի Մխիթարն ու խոր-Մանուկն են: Թէ խոր մակդիր է, այդ երևում է և այն հանգամանքից, որ ժողովրդական վէպն ունի և խոր-Գուսան, խոր-Վիրապ անուններ: Ինչպէս վէպի մէջ Մխիթարն ու խոր-Մանուկը հազիւ մի անգամ յիշուում են և այլ ոչինչ չկայ նոցա դործերի մասին, նոյն է համարեա և պատմութեան մէջ:

Մի ուրիշ կողմից էլ ջոջ Մհերի քեռին Թորոսը կապուում է Մամիկոնեանց հետ: Մի փոփոխակով¹ Կապուուկողի թագաւորն է Պապ, որի տղան է Թորոս, իսկ դուստրը Փիրզատ Խանըմ, որ ջրով յղանում է և ծնում է Ջոջ Մհերին: Այստեղ կայ պատմական հին յիշողութիւն: Ըստ Բուզանդի Արշակ Բ., Պապի հայրը, «կամարականների տոհմը որ Շիրակայ և Արշարունեաց գաւառների տէրերն էին, ազգատ է անում այսինքն ջնջում է, և գաւառները ոստան այսինքն արքունի է դարձնում»²: Վասակ Մամիկոնեանն ազատում է Սպանդարատին, որ յետոյ այն աշխարհի ժառանգ է դառնում: Ապա «Արշակ թագաւորը հրաման է տալիս Արշարունեաց գաւառում իւր համար Արտագերս անունով մի բերդ շինել»: Արդ այս Արտագերսը համարուում է Կապույտ³ բերդը: Բնականաբար ուրեմն Պապն այս Կապույտ բերդի թագաւորն է: Ապա յայտնի է որ Փառանձեմ, Պապի մայրը, այս բերդում շրջապատուած Պարսիկներից անհամբեր սպասում էր իւր որդու՝ Պապի օգնութեան⁴: Բացի այդ Մանուկը Մամիկոնեանը «իւր դուստր Վարդանդուխտը կնութեան տուաւ մանուկ Արշակունի Արշակին, այսինքն Պապի որդուն, և իւր փեսան է անում նորան»⁵:

1 Ե. Լալայեան Ազգ. Հանդէս. 1906. № 1 էջ 39—41:

2 Բուզ. Գ, ԺԺ. էջ 133: Խոր. Գ. 1ա, 1բ, էջ 218—219:

3 Ինճիճ. Ստոր. Ը. Հայաստ. էջ 396—399:

4 Փ. Բուզ. Գ. ԺԵ. էջ 174—175:

5 Փ. Բուզ. Ե, խդ. էջ 263, 265: Ըստ Խորենացու «Բարա՛ որդի Բաքիայ տեառն Սիւնեաց, որ անէր եւ Արեւիկայ:» Գ. խդ, էջ 233:

Մամիկոնեանց մասին ինչպէս ասել ենք վէպ և զրոյց եղել է և հնում: ոչ միայն նոցա ծագման ինչպէս երևում է Խորենացուց¹ և Սեբէոսից², այլև առհասարակ Մամիկոնեան քաջ սպարապետների մասին, որ ակնյայտնի երևում է Փ. Բուզանդացու մանաւանդ թէ Յովհան Մամիկոնեանի իբր թէ պատմագրութիւնից: Եօթներորդ դարուց Արաբացոց արշաւանքներից յետոյ մահմեդական տիրապետութեան ժամանակ այդ վէպը թարմացել է, և նորագոյն Մամիկոնեանք են հանդէս գալիս և սոցա հետ որ և է կերպով կապուած Արծրունիք և Բագրատունիք: Այսպիսով կարծում ենք, ինչպէս Դաւիթը նոր շրջանի Մամիկոնեաններից է, այնպէս էլ Մշոյ թագաւոր Մուշեղը:

Դժուար թէ ժողովրդական այժմեան վէպը աչքի առաջ ունենար միայն Դ. և կամ Ե. դարու Մուշեղ Մամիկոնեաններին, վերջինս մանաւանդ աննշան ոք է համեմատաբար: Ուստի պէտք է յետոյ եկած Մուշեղների մէջ ևս փնտռել: Այս ենթադրութիւնը նոյն իսկ վարկած է դառնում երբ դիմենք և օտար աղբիւրների Պարսից Խոսրով Բ. Պարուէզ (590—628) Վահրամ Զօրիի ձեռքից փախչում է և դիմում Մօրիկ կայսեր, որ նորան կնութեան է տալիս իւր Մարիամ դուստրը և օգնութեան է ուղարկում իւր «Թէոդոսիոս»³ որդուն 60,000 հոգով, նոցա զուլս կարգելով Սերգիոս⁴ անունով մի մարդ, որ նոցա

1 Խորեն. Բ. ձա, էջ 162—163:

2 Սեբէոս Բ. դպրութիւն, էջ 12—13:

3 Թ. Նէօլզըկէն ուրիշ տեղ կոչում է Թադեոս (Պատմ. Սասանեան թարգմ. Ն. Քարամեան, էջ 75. Վաղարշապատ 1896):

4 Այս Սերգիոսը մեր սուրբ Սարգիսն է, որ Ասորոց և Արաբացոց մէջ ևս յարգուած է: (Հմմտ. Tabari էջ 284. Th. Nöldek 1879: Նոյն հեղինակի Պատմութիւն Սասանեան էջ 74. Ն. Քարամեան. Վաղարշապատ 1896): Ս. Սարգիսը վէպի մէջ դարձել է Զէնով Սարգիս, որ Զէնով Օվանի եղբայրն է, ինչպէս վերև տեսանք: Այս երկուսի քոյրը Հնդայ Մելիքի կենն է: Այստեղ Հնդայ Մելիքը Խոսրով Բ. պէտք է հասկանալ, որի կին Շիրինը քրոնիսանեայ էր, (Սեբէոս Գ. դ, էջ 45): Խոսրովն ու իւր կինը խառնւում էին նոյն իսկ քրիստոնէական վէճերին:

բոլոր գործերը վարում էր, և էլի մի մարդ, որի ոյժը 1000 մարդու¹ ոյժի էր հաւասար»։ Խոսքով Պարուէզը «Ապա սոցա հետ միասին չուում գնում է Աղհարբայ-զան [—Ատրպատական] և բանակ է դնում Դաննակ² դաշտում։ Այն ժամանակ Վնդոն միացաւ նորա հետ և այս կողմի սպահնակներից մի Մուշեղ անունով մարդ 40,000 զինուորով»³։—Մուշեղը և երիտասարդ Թէոֆոսիոսը յիշուում են և Վահրամ Զորինի մասին էլաժ ումանի—վիպասանութեան⁴ մէջ։ Շատ հաւանական է որ մեր Մուշեղի մասին յիշատակութիւն լինի և Ֆիրդուսու Շահնամէի մէջ, որ ստուգելու համար դժբախտաբար առայժմ հնար չունինք։

Արդ Սերէոսն յիշում է երեք Մուշեղ Մամիկոնեան։ Առաջինը Վահրամ Զորինի դէմ կռուում է Խոսրովի համար, բայց յետոյ էլ ամբաստանւում է. Խոսրով Ապրուէզը կանչում է նորան բայց չէ համարձակում ձեռք տալ։ «Բայց այն Մուշեղին [Թագաւորը] այսինքն Յունաց կայսրը կանչեց իւր պալատը. և նա այլ ևս չտեսաւ իւր երկիրը»⁵։ Պարզ է, որ այս Մուշեղն է Թաբարիի և Վահրամ

1 Tabari էջ 284. ծանօթ. 2: Թ. Նէօլդեկէն բերում է այս «hazrāmard» և յարում է. «Այս ուրեմն որոշ անուն է մի քաջ զինուորի, գուցէ Թագաւորից շնորհուած անուն»։ Հազարամարդն անշուշտ տիտղոս է միայն. Հայերս ունինք և հազարան բլբուլ, յետոյ ասում ենք հազար-միշակ ճարպիկ հնարագէտ և բազմաեսակ զբաղմունք ունեցող մարդու համար։

2 Սերէոսն ասում է «յԱտրպատական» և բանակեցան սա-կաւ մի հեռագոյն ի միմեանց ի Վարարաւ գաւառին»։ Գ. գ. 37: Ֆերդինանդ Եռստին իւր Իրանի պատմութեան մէջ Բալարոթը գետ է կոչում (Iran, Phil. II, էջ 542), որ ըստ էութեան չէ հակասում Սերէոսին, որովհետեւ Վարարատը կարող էր համանուն գետ ունենալ։ Այստեղից հետեւում է, որ պէտք է լինի Վարարաւտ, որովհետեւ այս ձևից միայն կարող էր Բարա-րոթ ստացուել։

3 Tabari էջ 273—285:

4 Tabari էջ 476:

5 Սերէոս Գ. գ. 36—45: Մուշեղը մեռնում է Դանուրի կողմերը (Սեր. Գ. ը, 52), մի մահ որ յիշեցնում է Ռուսաց Իգո-

Չորինի ռոմանի Մուշեղը: Երկրորդ Մուշեղ Մամիկոնեանը «որդի Դավթի զօրավարն Հայոց»¹ Երեք հազար հոգով մասնակցում է Հերթիճանի (Կաղխիճայի²) կռուին և ընկնում է «երկու քեռորդովքն»: Երրորդ Մուշեղը Թէս-դորոս Ռշտունու ժամանակակից է և գործակից³:

Ակներև է, որ մեր վէպի Մուշեղը առաջին Մուշեղն է, պնդում ենք, ինչպէս երևում է և մի փոքրիկ համեմատութիւնից Սերէոսի Յովհան Մամիկոնեանի⁵ հետ:

ընդ նպանումը: Մեր ժողովրդական վէպի զիւցաշն Դաւիթը իւր մանկական խաղերի ժամանակ նոյն ձևով պատժում է իւր խաղակիցներին:

1 Սերէոս Գ. Է. էջ 107:

2 Սերէոս Գ. Է. 139—140. ԼԳ, 146. ԼԸ, 149, 152:

3 Պատմ. Տարօնոյ ա, էջ 13—15. Ը, 16—23: Հմմ. Սերէոս Գ. Գ, էջ 36—45: Յովհ. Մամիկոնեանը Սերէոսի Մուշեղին դարձնում է «Հայոց մարզպան»: Մուշեղին Խոսրով Բ. ի քոյրը իմաց է տալիս եղբոր նենգութիւնը, Մուշեղը իւր բառաւորն իշխանների հետ քփակոծում են Խոսրովին, նորա անմեղիքներ պարտաւոր: Մուշեղը Յունաց զօրավարին էլ սպանում է «մի զարթուցանէք զառելւծ՝ որ ի բուն է, և մի՛ զգայլ՝ որ գիւր բարսն մոռացեալ է» (էջ 13—15) և ին. ժողովրդական զրոյցի և վիպական ձևեր, որ չունի ժամանակակից Սերէոսը: Մուշեղը «հարիւր և բաւն ամ» պատերազմ է մղում (Ը. էջ 22), ուրեմն նոյնքան երկար է տարւում ինչպէս օտար ազգերի վիպական զիւցաշները Iran. Thil, II, էջ 132 ծանօթ. 6) Քառասուն թիւը որ այնպէս շեշտուած է մեր ժողովրդական վէպի մէջ այստեղ պահաս չէ, նոյն իսկ հակառակ Սերէոսի, ինչպէս Մուշեղի պատմութեան մէջ (Յ. Մամ. Ա. էջ 14) այնպէս էլ ուրիշ դէպքերում (Բ. էջ 29. Գ, էջ 38): Ժողովրդական զրոյցի և վիպական ուրիշ դժեր շատ կան Յովհ. Մամիկոնեանի գրուածքում, որ մեր ժողովրդական վէպն են յիշեցնում: Այսպէս Բ, էջ 16 և 21 յիշեցնում է ժողովրդական վէպի կռապաշտ թագաւորի Սուրբ Կարապետի վանքի վրայ դալը և 40 կրօնաւորի սպանումը. ապա «Կերան գազանք զմարմինս զիականցն Վարադայ, և գիրացան: Կուղ կերեալ, ուռաւ որպէս զարջառ» (Գ. էջ 45) յիշեցնում է, գոնեա ըստ ձևի, կանանց երգը Կուղբա-դինի մասին: Հետաքրքրական է և Սմբատ Մասիկոնեանի (Դ. էջ 14) վարմունքը Տիգրան (Դ) պարսկի ուղարկած պատգամաւորներին

Միայն թէ Յովհան Մամիկոնեանի զրուածքում Սեբէոսի Մուշեղի պատմութիւնն արդէն ժողովրդական զրոյցի ու վէպի ձև է ստացել: Թէ և ինչպէս Յովհան Մամիկոնեանի խօսքերից երևում է, նա Մուշեղը նկարագրելիս նշմարաւորում է և Պապի սպարապետ Մուշեղին, որին կոչում է

հետ, որոնց ըռնում է Սմբատը. «Հրացոյց շամիուր մի երկաթի, և եգ պսակ շուրջ զճակատովն, և ասէ. Կաց տեսանեմ թէ վասն քո զինչ պարգևս դայցէ ինձ, որ ես քեզ պսակ եղի» (Դ, էջ 47), որ նոյնն է, ինչ որ Սմբատ Բագրատունին անում է Մեհրուժանին (Մ. Խոր. Դ. լէ, էջ 227): Այս տեղիք է տալիս մեզ կարծելու, թէ ինչպէս ժողովրդական վէպի մէջ Արծրունիք և Բագրատունիք խառնուել և միացել են Մամիկոնեանց, այնպէս էլ Յովհան Մամիկոնեանի մէջ, որ ըստ ինքեան վէպ է համարեա ամբողջապէս:

Միայն թագազիւր՝ Բագրատունուն է պատշաճ այդպիսի խօսք, ինչպէս որ երևում է և Խորենացու Սմբատ սպարապետի խօսքից: Բայց Յովհ. Մամիկոնեանի Սմբատն անշուշտ Սմբատ Բագրատադթն է, որ Յովհան Մամիկոնեանի մէջ խառնուել և միացել է Խորենացու Ջիրաւ դաշտի զիւցազն Սմբատին, իսկ Յովհ. Մամիկոնեանի Տիրան Մամիկոնեանը Ս. Բաղդայադթի որդի Վարազ Տիրոցն է, որոնք 2. դարու վերջում և 3-ի սկզբներում մեր պատմութեան մէջ փայլում են (տես Սեբէոս և Ուխտանէս): Սմբատ անունը միայն Բագրատունեաց մէջ կայ, Տիրան անունն էլ թէ և միայն Արշակունեաց մէջ է երևում, բայց այդ անունն միւս Տիրոց ձեւը կայ Բագրատունեաց մէջը հինգերորդ դարում ևս (Ղ. Փարպ. Բ, լդ, էջ 67. Հրատարակութիւն Ս. Էջմիածնի Տիփիս 1904. Եղիշէ Դ, էջ 142 Թէոդոսիա 1861): Եթէ յիշուի Տարօնում Սմբատի և Տիրանի պէս քաջ Մամիկոնեաններ լինէին, ժամանակակից Սեբէոսը որեւէ յիշատակութիւն կանէր, ինչպէս որ Մուշեղի մասին այնպէս մանրամասն պատմում է: Եւ եթէ Սեբէոսն ունի, այդ Վարազ Տիրոց Բագրատունու մասին է, որ մօտաւորապէս 627/8 թուականներին Մոթէթի Դարեգպետ եղբոր ձեռքից զիշերով Դուինից փախչում է, «Եւ ճանապարհ կալեալ դնաց ի Տարօն: Եւ անդ երթեալ ժողովեաց զգաւրս.» (Սեբէոս Դ. իթ. էջ 102), որ տեղից գնում է Ասորեստան Հերակլ կայսեր մօտ: Հաւանօրէն այս անցքի և Ատրպառականի իշխանի Խոռ-Դ-Որմզդին և սորա որդի Ռոստոմին (Սեբ. Դ. իթ, 101) ցոյց տուած զիմագրութեան և ընդհանրմանց արձագանքն ու յիշողութիւններն են, որ Յովհան

Գաջակորով¹։ Անկասկած և միև Մուշեղները մանաւանդ թէ՛ զորոտի ժամանակակիցը, ինչպէս և յետինները, Ը. դարում Բագրևանդի կռուի դիւցազնը² միացել են և ի մի ձուլուել։ Սակայն քանի որ ժողովրդական վէպը Մուշեղին միայն Մշոյ թադաւոր է անուանում և էլ ուրիշ ոչինչ չէ պատմում, մենք հնարաւորութիւն չունինք ցոյց տալու թէ միև Մուշեղները որ չափով թարմացրել են Վահրամ Զորինի ռոմանի դիւցազն Մուշեղի մասին պատմական յիշողութիւնները³։

Մամիկոնեանը Տիրանի մասին պատմում է։ Արդէն նկատելի են այն անամանակու թիւնները (анакронизмы) որ կան Յովհ. Մամիկոնեանի մէջ, երբ մանաւանդ ի հաշիւ առնենք նորա յիշատակած ժամանակագրական վկայութիւնները և Դևակայ վանքի վանահայրերի ժամանակը։ Այնպէս որ կարելի է թէ նա ինքն Ը. կամ նոյն իսկ Ժ դարու մատենագիր լինի. իսկ Ը. դարում կայ մի Սմբատ Մամիկոնեան (Ղևոնդ. իա, էջ 112. իբ. էջ 118, 120) և Վահան պաարիկ Վամսարական (Զամչեան II, Գ. Ժե, էջ 374. հմմ. Ալիշան, Շիրակ, էջ 5. Վենետիկ 1881)։ Այսպէս միայն կարող էր Որմիզդ Գ. և Պերոզի ժամանակակից Մհրաւնեան Ռահամը (եղիշէ Ը. 318։ Նէօլգեկէ էջ 41. Թարգմ. Ն. Բարամ. Վաղարշապ. 1896) դառնալ Որմիզդ Գ. և իւր որդի Խոսրով Բ. Պարուէկի ժամանակակից Ռահամը (Յովհ. Մամիկոն. դ. էջ 32—34), որով ևս պէտք է հասկանալի լինի, թէ ինչու Մուշեղի մերձաւոր ազգական է դարձել Գայլ-Վահանը, որ և ժամանակով մօտենում է Մեծ Վահանին և նոյնանում։ (Տես և ներքեւ ծանօթութիւն 3)։

1. Պատմ. Տարօնոյ էջ 63 (յիշատակարան)։

2 Ղևոնդ. Պատմ. լդ, էջ 139—150։

3 Վահանի խնդրին գալով պէտքէ ասենք, որ Յովհ. Մամիկոնեանը իւր Մամիկոնեանց պատմութիւնը թէ՛ և սկսում է Խոսրովի ժամանակից, և թէ՛ և երևում է որ նա Խոսրով Բ. Պարուէկին ունի ի նկատի, քանի որ Որմիզդի որդի է անուանում (էջ 13), քայց ի նկատի առնելով ժամանակագրական, մի քանի պատմական անձանց և անցքերի յիշատակութիւնն ու նմանութիւնը, կարծում ենք, որ նա իսկապէս անգիտակցաբար ի նկատի ունի Խոսրով Ա. Նուշիւրուանին, երբ յիշում է Արաթանու Վաղամասեաց անառի և բլուրի ճակատը (էջ 53 և 65), որ իսկապէս մղել է Վարդան Բ. Մհրաւն Մհրեանդակի

Թէոդորոս Ռշտունին իբրեւ մեր պատմութեան արաբական շրջանի գլխաւոր դեր խաղացող պատմական անձնասել ենք արդէն վէպի Թեաթրոսն է: Ըստ վէպի Սանասարը գնում է Մելքոն թագաւորի կուշտ, որ Մհերին պատկեն: «Մանձկերտու բերդ, այստեղ էլ ասում են «բերդի հիմ թալեց, ակռատ կերաւ ու գնաց Արզրում»»: այդտեղ էլ պատասխանում են «բերդի հիմ թալեց, կէսօր կերաւ ու գնաց Ղարս»: Այդտեղ էլ նոյն կարճ պատասխանը. «բերդի

դէմ (Սերէոս Գ. ա, 26), որ չգիտեմ ինչու Ս-Մարտէնը Ուրմիայի մօտ է դնում (I, էջ 331): Այստեղ ինչպէս երևում է խառնուած են Վահանները, որ երեք են, երկուսը Մամիկոնեան, Գայլ Վահան և Վահան Մամիկոնեան, բայց Կամարական կոչուած: Գայլ Վահանը Յովհ. Մամիկոնեանի մէջ էլ իրօք Մուշեղի որդին չէ. ուստի կարծես Յովհ. Մամիկոնեանի Մուշեղը դառնում է Պապի սպարապետ Մուշեղը, իսկ սորա յաջորդ Մեծ Վահան: Մեծ Վահանի ժամանակ գալիս են հետզհետէ նորա դէմ Միհրան Խոսրովի քեռորդին, Միհրանի հօրեղբայր Վախսանգ, Սուրէն, Միհր Խոսրով. Մուշեղի ժամանակ Նիխորճէս, Վահանի հետ է Վարազ Պալուենի, անուններ, որոնք բոլորն էլ գործերի չնչին զանազանութեամբ պատահում են Ղ. Փարպեցու մէջ Մեծ Վահան Մամիկոնեանի ժամանակ: Վաշդենը, հաւանօրէն Վազգէն վրաց իշխանը, և Ջոշիկ իշխանորդին վրացիներ են, որոնք իրօք Վահանի ժամանակակից են (հմմ. Սուրբ Թ. Վկայաբ. Սրբոյն Շուշանկան): Հետաքրքրական է, որ Վարդանը վրաց Վախտանգի Գուրգասար մակդիրը թարգմանում է «Գալլագլուխ» պարսկերէնից (Ժ. էջ 91): Նորա բացառութիւնից հետեւում է, որ Գուրգասարն ձեն ևս նշանակում Գալլառիւծ. հաւանօրէն այդ ձեն է Գուրգասարն (=վրացի կամ վրաց առիւծ) կամ Գուրգան ասլան, ինչպէս մենք ունինք Ամբատ Գուրգան կամ Վրհան մարդպան (գիրք Թղթոց): Թողնելով Գայլ-Վահանի և Վահան Մեծի նոյնութիւնը այլ անգամ համեմատելու մանրամասնօրէն, այստեղ շեշտենք միայն ընդհանրապէս, որ Գայլ-Վահանի կռիւները ժողովրդական պատմութիւն կամ զրոյցն է Մեծ Վահանի, որ փայլում է իւր խոհեմութեամբ, քաջութեամբ և հնարագիտութեամբ, ինչպէս Գայլ-Վահանը:

Դժուար է ճշտութեամբ որոշել, թէ ով է միւս Կամարական կոչուած Վահանը, որ Յովհան Մամիկոնեանի Վենեակի հրատարակիչը ցանկին նայելով նոյնացրել է Գայլ-Վահանի հետ.

Հիմ թալեց, հրամէն կերաւ ու գնաց Մանձկերտու բերդ»
Մելքոնն ու Սանասարն այդտեղ են զիմում և ասում
Թեաթորոսին «Քու ախշիկ պոի տաս մեր տղին, Մհերին...
առան... էկան, հասան Սասուն» (Գ. Սար. Բ. 22—23):

մինչդեռ Յովհ. Մամիկոնեանը պատմելով Գայլ-Վահանի մահը
(գ. էջ 35) յաջորդ երեսից սկսեալ պատմում է նորա որդի
Սմբատի և թոռ Վահան Կամսարականի գործերը:

Այս Վահանը, ասում է պատմիչը, «Կոչէր ըստ Պապ ա-
նուանն Վահան Կամսարական» (գ. էջ 36)։ մի հանգամանք որ
մեր այժմեան ժողովրդական վէպի մէջ էլ շեշտւում է: Պատ-
մական է այս բարեպաշտ սովորութիւնը (Փ. Բուզանդ. Գ. ժա,
էջ 28)։ որպէս զի չմոռացուի նախնիքների յիշատակը, որոնց
նմանող պիտի լինէին, զի «ըստ յուսոյ» էին կոչւում անոնք
նորենացու խօսքով: Դիտենք սակայն, որքան պատմական է
պապի անունով՝ այնքան տարօրինակ և եզակաց է մօր ազգա-
նունով կոչուելը, «Մամիկոնեան Վահան՝ զոր մայրենեօք Կամ-
սարական կոչեն» (Յովհ. Մամիկոնեան, Յիշատակարան էջ 63):—
Արդ մի պէտք է լինի այս Վահան Մամիկոնեան-Կամսարականը:
Մամիկոնեանց և Կամսարականների ազգակցութիւնը յայտնի է
դեռ Գ. դարուց (Բուզանդ. Գ. ժա, էջ 28)։ որ երևում է և
ժողովրդական վէպում։ Ե. դարում ևս (Կ. Կոստանեան շիւ-
տուածք, I II, է, § 8, էջ 96): Վարդան Մամիկոնեանի փեսան է
Արշաւիր Կամսարականը, որի չորս որդիքն իբրև «ուխտառէր-
ներ» միշտ Վահանին աջակից և գործակից էին: Արդ այս չորսից
մինն էր Վահան, ու մասնակցում է ներսահապատի կռուին
(Փարպ. Գ. հա. էջ 129):

Դիտելու արժանի է, որ ըստ Փարպեցու այս Վահանը մօր
կողմից Մամիկոնեան է, իսկ Յովհան Մամիկոնեանի Վահանը մօր
կողմից Կամսարական է, սակայն մի վէպի մէջ որ շատ անգամ
պատմական յիշողութիւններ է միայն պահում այսպիսի շփո-
թութիւն հասկանալի է: Այսպէս էլ մեր աւանդութեամբ Մի-
հրդատ Պանտացին Տիգրան Մեծի քեռայրը՝ փեսան է, մինչդեռ
ըստ օտար պատմաբանների Տիգրանն է Միհրդատի փեսան:
Միւս կողմից դուցէ առարկուի, որ Վահան Կամսարականը ա-
ռանձին չէ փայլում Փարպեցու մէջ և մի անգամ է միայն յիշ-
ւում, սակայն վէպը կարող էր այս Վահան Կամսարականի մէջ
կենտրոնացնել և միւս եղբայրների գործերը, որ կարող էին թար-
մանալ Ե. դարում Վահան պատրիկ Կամսարականով (Շիրակ.
էջ 5)։ և որոնք յիշատակն աւելի մնար Մամիկոնեանց վէպի

Արդ մի կողմ թողնելով այն, որ Վարդ-Պատրիկ Արծրունին, հաւանօրէն թէոգորոս Ռշտունու որդի Վարդ պատրիկը, ըստ Յովհ. Մամիկոնեանի Մուշեղ Մամիկոնեանի փեսան է, Մարիամի¹ ամուսինը, զիտենք նոյնպէս որ Համազասպ Մամիկոնեանը թէոգորոս Ռշտունու փեսան էր²։ Այնուհետեւ պէտք է կարգաւ Սեբէոսը, թէ ինչպէս Եօթներորդ դարու ամենամեծ և հոյակապ հայը նսեմացրել է Բագրատունեաց և Մամիկոնեանց փառքը, ինքն է որ կաթողիկոսներ է դնում և փոխում և հայրենիքի սիրուն միաբանած նախարարների գլուխն անցած եկեղեցու և հայ-

մէջ, մանաւանդ որ Վահան անունը Մամիկոնեանց մէջ շատ դործածական է սկսեալ Գ. դարուց.—Մի աչքի ընկնող էական տարբերութիւնն էլ այն է, որ ըստ Յովհան Մամիկոնեանի այս Վահան կամուրաւանն իշխում և դործում է Տարօնում, որ չունի Փարպեցիին, ուստի կարծում ենք որ Յովհան պատմչի նիւթը սորա հետ ի մի է ձուլել և մի այլ Վահան, որ իրօք իշխում է եղել Տարօնում։ Յովհան պատմիչը գիտէ, որ Տարօնը Մամիկոնեանցն է մինչև է. դարու կէսերը և պատմում է իողական Մամիկոնեանց Մուշեղի և Գայլ-Վահանի մասին, ըսյց յետոյ յիշում է անցքեր և անուններ, որ յատուկն են ինչպէս տեսանք 3 ժանօթութեան մէջ Բագրատունեաց։ Ուրեմն պատմչի նիւթն առնուած է մի այնպիսի ժամանակից յետոյ, երբ Տարօնում իշխում էին Բագրատունիք։ Արդ Տարօնի տէր Բագրատ Բագրատունու, Դաւիթ որդին ունէր Վահան անունով մի որդի, որ փեսայ էր Սմբատ Ա. Բագրատունու Շապուհ եղբոր (Յովհան կաթող. էջ 96)։ Իսկ այս Վահանը որ մեռաւ 868-ին, ըստ Կոտանդին Պորփիրոսէնի ունէր իւր Սպուղան որդուց երեք թու³ թուների, Վահան և Սմբատ (Չամչեան II, Գ. ք, էջ 726։ Թուեկայ մասին հմմ. Թ. Արծր. Բ. դ, էջ 109), որով սա էլ իւր պապի անունով է կոչւում և Բագրատունի է ու դործում է Տարօնում։ Այս դէպքում ի հարկէ Յովհան Մամիկոնեանը Ժ. դարում պէտքէ ապրէր, ինչպէս որ վերին էլ ենթադրեցինք, եթէ ոչ պէտք է այս յաւելումները յետոյ եղած լինին Յովհան պատմչի մէջ, որ սակայն շատ աւելի անհաւանական է։

1 Պատմ. Տարօնոյ Ա, էջ 9։

2 «Իսկ թէոգորոս Ռշտուն(ն)եաց տէր դարանակալ եղև յԱղթամար կղզի՝ ինքն և փեսայ իւր Համազասպ Մամիկոնէից տէր» Սեբէոս Գ. քե, էջ 143։

բենիքի ազատութեան նախանձախնդիր Հայաստանի դաւառներն է չափչփում մերթ յունաց, մերթ արաբացոց դէմ կռիւ մղելով յատկապէս Կարին քաղաքում Կոստանդին կայսրին հանդիպելը¹։

Ստեփան Կանայեանց.

(Շարունակելի).

Ն. ՎԵՐՆԷՐ

Ո՞ր է ՏԱՆՈՒՄ հասարակութեան զարգացումը։

* * *

Սակայն, թէև հարիւր միլիոնաւոր աշխատող ժողովուրդ գործում են միասին, բայց իրենք այդ բանը չեն նկատում և գեռ որ աւելի նշանաւոր է, դրանից ոչ ապահովութիւն են ստանում և ոչ էլ իսկական բարեկեցութիւն։ Ի՞նչ բանից է այս ամենը այդպէս տարօրինակ դասաւորուել։ Դրան շատ յայտնի պատճառներ կան։

Մեր բանւորը չի թը գնել է շուկայում, գնել է վաճառականից, նա այնտեղ միայն չի թն է տեսել և վաճառականին, բայց չէր կարող այն ամենը տեսնել, ինչ որ մենք այժմ քրքրեցինք։ Չթի վրայ ոչ մի հետ, չկայ այն միլիոնաւոր մարդկանց աշխատութիւնից, որոնք նրա արտագրութեան մէջ ամեն կերպ մասնակցել են. իսկ վաճառականը այդ աշխատանքի մասին ի հարկէ բերան չէ բանում, այլ ուղղակի ասում է—«ապրանքը իմն է» և աշխատում է գնողից մի բան աւել պոկել. ուրեմն բանւորը պիտի ընդունէ, որ այդ այդպէս է, որ չի թը վաճառականին է պատկանում և ի հարկէ վաճառականը այդ բանւորի մասին

1 Սեքէոս Գ. Է, 139։